ԿԱՐԾԻՔ

Նարե Գագիկի Մկրտչյանի

«ԹՐՈՒՄԵՆ ԿԱՊՈՏԵԻ ՈՉ ՖԻԿՑԻՈՆԱԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅՈՒՆԸ»

թեկնածուական ատենախոսության մասին

Վերջին տարիներին մեծ է հետաքրքրությունը վավերագրական ժանրերի, մասնավորապես՝ վավերագրական վեպի, քրեական հանցագործությանը կամ հանցագործություններին նվիրված՝ այսպես կոչված crime novel, true crime novel, nonfction crime ժանրի նկատմամբ: Ընդ որում, ի տարբերություն դետեկտիվ վեպի, այստեղ ուշադրությունը կենտրոնացած է ոչ թե հանցագործության հետաքննության, այլ ընթերցողներին՝ հանցագործների և զոհերի աշխարհը ներկայացնելու, նրանց տառապանքներին և դրդապատճառներին ծանոթացնելու վրա: Վավերագրական քրեական վեպ կոչվող այս ժանրի ստեղծողն է համարվում Թրումեն Կապոտեն՝ 1965 թվականին գրված «Սառնասրտորեն» իր վեպով :

Այս վեպի, ինչպես նաև Կապոտեի այլ «ոչ գեղարվեստական» ստեղծագործությունների ժանրի ինքնատիպությունը դարձել է Նարե Մկրտչյանի կողմից իրականացվող կառուցվածքային, համատեքստային և նարատոլոգիական վերլուծության առարկան: Ինձ թվում է՝ ատենախոսության մեջ առկա է նաև լուրջ տիպաբանական վերլուծություն, որի մասին հեղինակը չի նշում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի և հետազոտության մեթոդների ընտրությունը, արդիականությունը, նորույթը, նպատակը և խնդիրները:

Առաջին գլխում, որը վերնագրված է **«Ոչ ֆիկցիոնալ գրականության» վերաիմաստավորումը ԱՄՆ-ում 20-րդ դարի երկրորդ կեսին»,** ատենախոսը, հենվելով բավականին ծավալուն քննադատական նյութի վրա, ներկայացնում է Կապոտեի ստեղծագործությունների վերլուծության ժամանակ իր կողմից օգտագործած նարատոլոգիական հասկացությունների և տերմինների համակարգը:

Դրանք են ֆիկցիոնալությունը, ֆոկալիզացիան, անախրոնիզմները, հեղինակային ատյանները և այլն:

Ինձ հատկապես հետաքրքրեց ատենախոսի վերաբերմունքը հեղինակի խնդրին: Հայտնի է, որ ժամանակակից արվեստին նվիրված հումանիտար և փիլիսոփայական ուսումնասիրություններում (կինո, գրականություն, գեղանկարչություն, թատրոն) շատ հաճախ հեղինակ հասկացությունը «լղոզված է»: Հետաքրքիր է այս առումով նկարների, երաժշտական ստեղծագործությունների, ֆիլմերի հանդեպ վերաբերմունքը՝ որպես նարատիվի: Նոտաների հերթականությունից է կախված երաժշտության կառուցվածքը, տառերի հերթականությունից՝ տեքստի կառուցվածքային կազմակերպումը: Մինչդեռ այս ներքին առարկայական կարգը կապված չէ հեղինակի ներկայության հետ:

Գիտնականները հիմնվում են փիլիսոփայական այն ավանդույթի վրա, որտեղ «գոյություն չունեցող գոյություն ունեցողը » (հորինված կերպարը) հանդես է գալիս որպես երկու իրական մարդկանց՝ հեղինակի և ընթերցողի (դիտողի, լսողի) կապող օղակ: Այնուամենայնիվ, այսօր վերլուծության վեկտորն ավելի ու ավելի է միտված դեպի հեղինակի և ընթերցողի (դիտողի, ունկնդրի) փոխհարաբերությունները. միջանկյալ կերպարը դուրս է մնում ստեղծագործական իրական գործընթացից:: Ընթերցողը (դիտողը, ունկնդիրը) ինքն է դառնում պատմող (կամ ժամանակակից հետազոտական լեզվով ասած՝ նարատոր): Հենց այս պատմություններն են կազմում նարատոլոգիայի՝ որպես հումանիտար գիտելիքի մեթոդաբանության շրջանակը:

Սակայն այստեղ մի նուրբ հարց է ծագում նարատոլոգիայի և մեկնաբանության փոխհարաբերությունների վերաբերյալ, այսինքն. այն մասին, թե որտեղ է ավարտվում տեսական աշխատանքը և սկսվում կոնկրետ տեքստի մեկնաբանությունը:

Երկրորդ գլխում՝ «**Սառնասրտորեն» նոն ֆիկշն վեպի ժանրային առանձնահատկությունները**», քննարկվում են վեպի ժանրաստեղծ առանձնահատկությունները, մասնավորապես՝ ֆոկալիզացիան և վեպի հեղինակի կողմից դրա կիրառման եղանակները: Ատենախոսն այստեղ հիմնվում է Ժենետի և Բարտի տեսական դրույթների վրա: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Ժենետը հիմնվում է Ռոլան Բարտի 1966 թ. հրապարակված «Ներածության» դրույթների վրա, որոնցից ինքը Բարտը սկսեց հեռանալ՝ դրանց «սցիենտիզմի» պատճառով: Այդ մասին

են վկայում Բարտի հետագա աշխատությունները – «Իրականի ազդեցությունը» (L'effet de reel), «Հեղինակի մահը» (La mort de l'auteur), «Ստեղծագործությունից՝ տեքստ» (De l'œuvre au texte):

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Նարե Մկրտչյանի կազմած ներքին ֆոկալիզացիայի աղյուսակը ՝ տեքստի առանձին հատվածներում:

Համոզիչ է նաև վեպի տարածական և ժամանակային հնարների, անախրոնիաների, մասնավորապես՝ հակաանոնսի, անալեպսիսի, vox pop լրագրողական հնարի վերլուծությունը:

Վերջապես, երրորդ գլխում, որը վերնագրված է «**Թրումեն Կապոտեի ստեղծագործական մեթոդի աղբյուրները և դրա էվոլյուցիան**», դիտարկվում է «Մուսաները լսվում են» էսսեն, «Ինքնաստեղծ դագաղիկներ» պատմվածքը, և «Երաժշտություն քամելեոնների համար» ժողովածուում ընդգրկված դիմանկարային էսսեները: Ըստ ատենախոսի՝ այստեղ հեղինակը տեքստում ներկայանում է և՛ որպես պատմող, և՛ որպես կերպար, խոսում է ինքն իր հետ՝ բացահայտելով իր անհատականությունը և իր դիրքորոշումը:

Ատենախոսության վերջում ներկայացված են ուսումնասիրության արդյունքում ատենախոսի բավականին հիմնավորված և ինքնուրույն եզրահանգումները և գրականության ընդարձակ ցանկը՝ մենագրություններ, հոդվածներ, բառարաններ՝ շուրջ 200 վերնագիր, ներառյալ թե՛ դասական դարձած նարատոլոգիական աշխատությունները, թե՛ վերջին տարիների ուսումնասիրությունները:

Ատենախոսությունը իրականացված է պատշաճ գիտական մակարդակով, և ակնհայտ է, որ հեղինակը ազատ տիրապետում է ուսումնասիրության նյութին: Բացի այդ, անգլերենի իմացությունը թույլ է տալիս արժեքավոր դիտողություններ անել Կապոտեի ռուսերեն թարգմանությունների վերաբերյալ:

Ինձ առավել հաջողված են թվում «Սառնասրտորեն» վեպի պարատեքստի և հիմնական թեմաների վերլուծությանը նվիրված էջերը, մասնավորապես՝ «ամերիկյան երազանքի» և մահապատժի մոտիվները: Այստեղ Նարե Մկրտչյանը դուրս է գալիս նարատոլոգիայի հստակ շրջանակներից և դրսևորում գրականագիտական ավելի լայն մոտեցման կարողություն:

Մանրամասն վերլուծելով վեպի ժանրային գործոնները՝ պարատեքստ, հեղինակ և պատմող, ֆոկալիզացիա, ժամանակագրություն և տեմպորալ հնարքներ և այլն, և այդ վերլուծությունը տեքստից մեջբերումներով հիմնավորելով՝ ատենախոսը գալիս է այն եզրակացության, որ Կապոտեի ոչ գեղարվեստական ստեղծագործությունների ժանրը սինթետիկ է:

Որպես առաջարկ ասեմ, որ ինձ ավելի տրամաբանական է թվում տեղերով փոխել թեզի երկրորդ և երրորդ գլուխները, քանի որ, թեև որոշ ստեղծագործություններ, օրինակ՝ «Ինքնաստեղծ դագաղիկները», գրված են ավելի ուշ շրջանում, սակայն երկրորդ գլխում կարելի էր ներկայացնել Կապոտեի ոչ ֆիկցիոնալ ստեղծագործության էվոլյուցիան, իսկ երրորդն ամբողջությամբ նվիրել «Սառնասրտորեն» վեպին: Այնուամենայնիվ, սա իմ անձնական կարծիքն է և չպետք է ընկալվի որպես նկատողություն:

Այսպիսով գտնում եմ, որ Նարե Մկրտչյանի «Թրումեն Կապոտեի ոչ ֆիկցիոնալ ստեղծագործությունների ժանրային ինքնատիպությունը» թեկնածուական ատենախոսությունը կայացած գիտական աշխատություն է, համապատասխանում է նույնատիպ աշխատություններին ներկայացվող պահանջներին, ուստի դրա հեղինակը արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Բրյուսովի անվ. ՊՀ
Համաշխարհային գրականության
և մշակույթի ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր — Նատալյա Խաչատրյան

Բրյուսովի անվ. ՊՀ
Գիտ.քարտուղար — Հասմիկ Փիլավջյան